# ԱՒԵՏԱՐԵՐ

ՏՂԱՅՈՑ ԱՄԱՄԲ

“ԹՈՂ ՏՈՒՆՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՔԻ ԳԱՆ”. ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԵ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1886 ԹԻՒ 7

## ՀԷՆՐԻ ՄԱՐԹԻՆԻ ՏՈՒՆԸ

Ամերիկական եկեղեցիք սրբոց տոնախմբութիւն չեն կատարեր, և ոչ կը նային անոնց իբրև բարեխօսներու, սակայն կը պատուեն այն Քրիստոնեայ դիւցազունները, որք աշխատած են հաւատարմութեամբ և անձնուիրաբար ի նպաստ ճշմարտութեան և արդարութեան դատին աշխարհի մէջ։ Այսպիսի հաւատարիմ մշակ մը, թէ ըլլայ Հրեայ նման Պօղոսի, կամ Յոյն նման Ոսկեբերանի, և կամ Անգղիացի նման Հէնրի Մարթինի, թէ տպրի առաջին դարուն կամ տասն և իններորդ դարուն մէջ, միշտ կը յարգուի բոլոր եկեղեցիէն, և անոր յիշատակը միշտ սիրելի և օրհնեալ է։

Գանգէս գետին վրայ շինուած Սերամիուր քաղաքը կը յիշեցունէ մեզ այսպիսի քանի մը դիւցազուններ։ Այս քաղքին մօտ գերեզմանատան մէջ կը ննջեն Քերիլլ, Մարշմէնի և Ուորտի մարմինք, որք առաջիններն են արդի միսիոնարաց։ Քերիլլ Հնդկաստանի ցամաքը եղաւ 1793 ին, և միւսները գացին 4 տարի ետքը, ուր անոնք ոչ միայն նեղութեան կերակրոյ համար, այլ բոլորն ալ երկրէն պիտի արտաքսուէին եթէ զանոնք չպաշտպաներ Տանիմարքացիք, որք յայնժամ կը տիրէին Սերամիուրի։

Հէնրի Մարթին Հնդկաստան երթալու համար նաւով ճամբայ ելաւ 1805 ին։ Նա Քէմպրիճի համալսարա-

ՀԷՆՐԻ ՄԱՐԹԻՆԻ ՏՈՒՆԸ

նէն Հէնրի Մարթինի, թէ տպրի առաջին դարուն կամ տասն և իններորդ դարուն մէջ, միշտ կը յարգուի բոլոր եկեղեցիէն, և անոր յիշատակը միշտ սիրելի և օրհնեալ է։

Գանգէս գետին վրայ շինուած Սերամիուր քաղաքը կը յիշեցունէ մեզ այսպիսի քանի մը դիւցազուններ։ Այս քաղքին մօտ գերեզմանատան մէջ կը ննջեն Քերիլլ, Մարշմէնի և Ուորտի մարմինք, որք առաջիններն են արդի միսիոնարաց։ Քերիլլ Հնդկաստանի ցամաքը եղաւ 1793 ին, և միւսները գացին 4 տարի ետքը, ուր անոնք ոչ միայն նեղութեան կերակրոյ համար, այլ բոլորն ալ երկրէն պիտի արտաքսուէին եթէ զանոնք չպաշտպաներ Տանիմարքացիք, որք յայնժամ կը տիրէին Սերամիուրի։

Հէնրի Մարթին Հնդկաստան երթալու համար նաւով ճամբայ ելաւ 1805 ին։ Նա Քէմպրիճի համալսարա-

նին մէջ բարձրագոյն պատուոյ արժանացած էր. — այն համալսարանը կազմող վարժարաններէն միոյն պատկերը դրած ենք Տղայոց Աւետաբերին Ապրիլի Թուոյն մէջ։ Նա էր որ առաջին անգամ գնաց ի Սերամիուր և բնակեցաւ հին մեհեանի մը մէջ, որ, ինչպէս կը տեսնէք պատկերին մէջ, չինուած է գետափան վրայ։ Մեհեանը Անդղիացւոյ մը հողին վրայ էր, և Մարթին Ս. Գրոց քանի մը մասերը թարգմանեց Հընդկերէն լեզուին ճիշդ այն տեղւոյն վրայ ուր երբեմն կուռց պաշտօն կը մատուցուէր։ Փիչ մը հեռը սովնեցաւ Պարսկերէն և նոր կտակարանը թարգմանեց նոյն լեզուին։ Աւետարանութիւնը ձեռագրած ըլլալով սոխպուեցաւ Թողուլ իւր աշխատութիւնները և չանալ կազդուրիլ ճամբորդութեամբ։ Դժուար և տաժանելի ճամբորդութիւն մը երբ Պարսկաստանի մէջ և փոքր Ասիոյ քանի մը կողմերը, և վերջապէս մեռաւ Եւդոկիա հոկտ. 16, 1812 ին, և յետոյ անոր մարմինը փոխադրուեցաւ տեղւոյն Աւետարանականաց ժողովրանին պարտէզը։ Հէնրի Մարթին կրնար համբաւ ստանալ իբրև քաղաքագէտ կամ իբրև դատաւոր, բայց ո՞վ՝ որ կը հաւատայ հանդերձեալ աշխարհի վարձատրութեանց, պիտի ըսէ թէ անոր կեանքը նուաղ օգտակար եղաւ աշխարհի։



ՄԵՀԵԱՆԻ ՄԸ ՄՈՒՏՔԸ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

## ՀՆԴԿԱՑ ՁԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Մեք, որ կ'ապրինք տասն և իններորդ դարու վերջին կիսուն մէջ, ենթակայ ենք կարեկցաբար նայիլ անցեալ սերնդոց վրայ, իբրև տգէտ բարբարոսները մեզի հետ բաղդատելով։ Անտարակոյս աշխարհ յառաջ կ'երթայ, բայց անցելոյն մէջ եղած են զարմանալի քաղաքակրթութիւնք, որոց գործերուն առջև կը կայնինք տարակուսութեան։ Ժամանակիս ո՞ր ղեկավ ձեւով կառուցուած չէնքեր քան հին հեթանոսական մեհեանները կամ քրիստոնէական նախնի դարուց եկեղեցիները։ Եւ ի՞նչ զարմանալի համբերութիւն և հանճար կը տեսնուի գործերը արդարև կրնան բաղդատուիլ, հաստատութեան մասին, եգիպտական բուրգերու կամ Ջինական մեծ պարսպին հետ։ Ո՞ւր կան աւելի գե-

Հնդկական ճարտարապետութեան մէջ։ Մեք բաղդատաբար քիչ բան գիտենք հարաւային արեւելեան Ասիոյ պատմութեան նկատմամբ, բայց այն ժամանակին քարեղէն չինուածները կատարելութեան մեզ տեսակ մը արձանագրութիւն ղոր կը կարդայ այժմ նա, որ կ'այցելէ Հնդկաստանի հին մեհեանները և պալատները, և որմէ կ'իմանանք ժամանակին հոն բնակող ազգայ կամ ցեղերու մեծութիւնը։ Պատկերին մէջ տեսնուած դրան մուտքն է ասոր միապացոյցը։ Ասյսպիսի մուտքեր գտնուած են շատ տաճարներ և պալատներ մտնելու տեղերը, և յաճախ 100 ոտք բարձր են անոնք։ Ասոնք չինուած են որձաքարէ (կրանիթ), և մէն մի քառակուսի մատնաչափ ծածկուած է խիտ փոխուկ քանդակներով։ Եթէ պատկերին մէջ տեսնուած դրան մուտքին բարձրութիւնը բաղդատենք հոն կայնող մարդուն բարձրութեանը հետ, կրնանք գաղափար մը կազմել թէ՛ դրծին մեծութեան և թէ՛ կատարելու համար ղոյն պէտք եղած աշխատութեան մեծութեան վրայ։

Բայց դրանց մուտքի վրայ ի գործ դրուած աշխատանքը պզտիկ բան է բաղդատելով այն աշխատանքայ հետ, որ թափուած է տաճարներու վրայ ուր կ'առաջնորդեն այն մուտքերը։ Եւ եթէ հընդիկք, նուաստացուցիչ կռապաշտութեան մը աղդեցութեանց ներքև, կարող էին այսպիսի գործեր կատարել, աւելի մեծ բան կրնանք սպասել անոնցմէ, երբ Աւետարանը, որ ա՛յնքան մեծ նպաստ մատուցած է Եւրոպայի, առ հասարակ ընդունուի ա նոնցմէ, և ժամանակ ունենայ տարածել իւր գերազանց ոգին և ազդեցութիւնը։

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ՈՒԻԼԻ ՊԱՀՈՒԵՑԱԻ ՍԱՌՆԵԼԷ

Աղքատիկ աղայ մը Ուիլի անուն, որ ի Սկովտիա ոչխարներ կ'արածէր, առտուկ ձեան փոթորկի բռնուեցաւ բլուրներուն վրայ։ Երկար ատեն և քաջութեամբ տոկայ և չկրնայ վարել իւր հօտը դէպ ի տուն ուշադրութեամբ դիտելով ճամբուն վրայ դրսնուած նշանները ղրա կը ճանչնար։ Բայց ամէն բան ելաւ ի դերև. ձիւնը կ'իջնէր արագ, և դիշերը վրայ հասած ճամբաներու և չաւիղներու ամէն հետք եղան անյայտ. ուստի եղկելին Ուիլի գտաւ զինք առանձին իւր ոչխարայ հետ լերանց մէջ։

Երբ դիշերը վրայ հասաւ, մահացու թմբրութիւն մը սկսեց գալ անոր վրայ, որուն դէմ կարող չէր դնել և չուներ բնաւ տեղ մը ուր ապաստանէր։ Վտանգը որոյ պատկեցաւ իւր ոչխարներուն մէջ որպէս զի քնանար և մեռ-

ԼԻՏՖՈՐՏԻ ԿԻՐՃԸ

նէր. քանզի կը խորհէր թէ անշուշտ այլ ևս պիտի չարթննար երկրի վրայ։ Աստուածային օգնութիւն հայցելու համար հեղձամղձուկ ձայնիւ աղօթելէ ետքը լռեցաւ ի քուն. և մինչ պատկած էր ուրիշ ոչխարք ևս եկան և խառնեցան անոր շուրջը։ Եւ արդարև զարմանալի կ'երևի թերևս որ անոնց մարմինները պահեցին տղան սառելու մեռնելէ։ Տնեն քանի մը անձինք ճամբայ ելան փնտռել զՈւիլի, և գտան զնա շրջապատեալ տասներկու ոչխարներէ, որոց բնազդումը աղատած էին զնա մեռնելէ։ Ոչխարք զիրենք տաք պահելով՝ անոր մէջ պատհած էին տաքութիւն և կեանք։ Ուիլի ապրեցաւ այնուհետև չատ տարի և կը պատմէր իւր մանկութեան այս արկածը, երբ կորսուեցաւ Հիւսիսային ամայի բլրոց մէջ։

## ԼԻՏՖՈՐՏԻ ԿԻՐՃԸ

Եթէ մեր փոքրիկ ընթերցողք բանան իրենց աչխարհագրութիւնները, պիտի տեսնեն որ Անդղիոյ հարաւային արևմտեան անկիւնը թերակղզի մը կը ձևացունէ։ Ասյս թերակղզւոյն վրայ կարծր որձաքարէ (կրանիթ) կազմեալ ցարթմուր կոչուած լեռնադաչտ մը կայ, որ Անդղիոյ հարաւային մասին մէջ բարձրագոյն երկիրն է։ Ասյս լեռնադաչտը շրջապատող ցած երկիրը չատ բերրի է, բայց լեռնադաչտը կը բերէ քիչ մը խոտ միայն, ուր կ'արածին խաչինք և արջառք տարուան քանի մը ամիսներուն մէջ։ Ցարթմուրէն ծագումն կ'առնուն քանի մը փոքր գետեր, յորոց ոմանք կը հոսին դէպ ի հիւսիս և ոմանք դէպ ի հարաւ։ Ասյս գետոց փոքրագոյններէն միոյն վրայ կ'իյնայ պատկերին մէջ տեսնուած այն գեղեցիկ լիտֆորտի կիրճը։ Հազարաւոր տարիներու շրմումամբ, ջուրը իրեն համար ճամբայ մը բացած է այդ կարծր որձաքարին մէջէն, և մինչ կը դիտենք պատկերը՝ կարծես թէ կը լսենք ջուրին ձայնը որ սահելով չրվէժն ի վար՝ կը մտնէ կիրճը։ Բաղդը պիտի ըլլար նստիլ դահլանդին ստուերին տակ և լսել գետակին ձայնը ամրան այս տաք օրերուն մէջ։ Ըստ մեզ, ո՛չ մեկ մարդկային գործ ունի այնչափ հրապոյր որչափ բնութեան այս գեղեցկութիւնները։ Ամենէն փառահեղ շէնքեր հազիւ կը չարժեն հեռադիտրութիւնը քանի մը անգամ մեր անոնց մէջ մտնելէն ետքը, բայց այսպիսի բնական տեսարան մը ո՛չ երբեք կը ձանձրացունէ զմարդ։

Գետակը կարծես կենդանի է և կը խայտայ, և անոր խոխոջիւնը նման է ձայնի որ կը հռչակէ Աբրչէին խնամատութիւնը և զօրութիւնը։

Պատկերին մէջ ցուցուած տեղէն քիչ մը անդին կան անագի հարուստ հանքեր, և Ցարթմուրի մեկ ուրիշ կողմը կայ մեծ բանտ մը ուր բանտարկուեցան 10,000 գերի բռնուած Դալիացիք այս դարուն սկիզբները։

### "ԴՊՐՈՑ ՊԷՏՔ Է ԵՐԹԱՍ"

"Հայր, դպրոց պէտք է երթամ," ըսաւ Յոննիկ, առաւօտ մը մինչ մայրը կը պատրաստէր ընթ։ "Ես չեմ հասկընար գիրքերը, և քնաւ պիտի չհասկընամ։ Ես կ'ուզէի մնանաւանդ փայտ կոտրել անտառին մէջ քեզի հետ և օգտակ աշխատել։"

"Յո՜ննիկ, երէկ ի՞նչպէս կարեցինք այն ահագին ծառը," հարցուց հայրը։

"Մէկ հարուած տալով մէկ անգամին, և ընելով այնպէս չարունակ," պատասխանեց տղան։

"Այո," ըսաւ հայրը, "մէկ բառ սորվելով մէկ անգամին և ընելով այնպէս չարունակ, պիտի սորվիս լաւ կարդալ. մէկ վանկ սորվելով մէկ անգամին, և ընելով այնպէս չարունակ, պիտի սորվիս լաւ հեգել. մէկ յաւելում մէկ անգամին, և ընելով այնպէս չարունակ, պիտի սորվիս լաւ հաշուել. մէկ գաղափար մէկ անգամին, և ընելով այնպէս չարունակ՝ պիտի սորվիս ինչ որ կը սորվեցունէ աշխարհիս մէջ գտնուած խրթնագոյն գիրքը։

Յո՜ննիկ, համբերութեամբ չարունակելով ուսանիլ՝ պիտի ըլլաս ուսումնական։"

"Ա՞յդ է ամէնը," հարցուց Յոննիկ։

"Այո, այս է ամէնը," ըսաւ հայրը։

"Թերևս կրնամ ընել այդպէս," ըսաւ Յոննիկ, և այն ժամանակէն վեց տարի չանցած՝ Յոննիկ եղաւ դպրոցին բարձրագոյն դասին մէջ առաջինը։

### "ԵՍ ԵԿԱՑ, ՏԷՐ"

"Հաճեցէք գնել դդում, տէր," ըսաւ շատ փոքրիկ տղայ մը քաջածանօթ բժիշկի մը որ մանելու վրայ էր իր տունն Ամերիկեան մեծ քաղաքի մը մէջ։

Բժիշկը դարձաւ նայիլ փոքրիկ մանկան վրայ։ "Դու նպարավաճա՞ռ ես," հարցուց անոր։

"Ոչ, տէր, բայց իմ հայրս է," պատասխանեց տղան։

"Ներս բեր դդումներէդ քանի մը հատ," ըսաւ բժիշկը, մինչ կը մտնէր տունէն ներս։

Տղան տարաւ դդումները խոհանոցին դուռը, և ընդունեց քանի մը տակ, զորս բժիշկը ղրկած էր տալ անոր։

Երբ տղան կը դառնար բժիշկին տունէն, տեսաւ որ իրեն տրուած էր աւելի տակ քան որչափ էր դդումներուն դինը։ Մանրացուց տակներէն մին և դարձաւ ետ և հարցուց թէ ո՛ւր էր բժիշկը, և ներս մտնելով տունէն երկընցուց անոր դդումին դնէն աւելորդ տակը։

"Դուն կրնաս պահել ղայդ քեզի համար, որդեակ," ըսաւ բարի մարդը։

"Չեմ կրնար ընել ղայդ," ըսաւ փոքրիկ նպարավաճառը, "չիտակ չըլլար այդ, և հայրս պիտի բարկանայ ինձ։"

Յայտնի կ'երևէր թէ տղան էր շատ աղքատ ծնողաց զաւակ, վասն զի անոր հանդերձներուն վրայ կային շատ կարկրաններ, բայց տղան կոկիկ և մաքուր էր։ Բժիշկը նայեցաւ անոր վրայ հաճոյքով մէկ երկու վայրկեան, և յետոյ ըսաւ ժպտելով,

"Դու ես տղուոր փոքրիկ տղեկ մը, չե՞ս ուզեր գալ և բնակել մեզի հետ և ըլլալ բժիշկ։"

"Այո, տէր, կ'ուզեմ," պատասխանեց տղան։

"Մարդու նման խօսեցար," ըսաւ բժիշկը, և սիրով չոյելով տղին դլուխը, մտաւ տուաւ անոր երթալ։

Քանի մը շաբաթէն հաքը Յակոբ, բժիշկին ծառան, մտաւ հիւանդ նայելու սենեակը և ըսաւ բժիշկին թէ փոքրիկ տղայ մը կ'ուզէր տեսնել իւր տէրը։ Երբ բժիշկը ըսաւ ներս թող դայ, ահա երևցաւ փոքր տղայ մը շատ մանրամասն հագուած, նոր բայց տարբին տափճանի կտաւէ, և ձեռքը ծրարով մը։ Թողլով ղայն և իւր դէմքարիը դրան քով, դնաց դէպ ի բժիշկը և ծռելով ըսաւ,

"Ես եկայ, տէր։"

"Ի՞նչ բանի համար եկար," հարցուց բժիշկը։ Որուն խոկայն պատասխանեց տղան,

"Ձեր հետ ապրելու, և ըլլալ բժիշկ։"

Նպարավաճառ տղան էր սա, որ բժիշկին կատակի ձևով հրաւէրը առած էր իրրև լուրջ խօսք։ Խօսած էր անոր վրայ իւր հօր և մօր, և ատոնք դիտնալով բժիշկին աղնիւ յատկութիւնները, ուրախութեամբ հաւանած էին որ տղան երթար այն ինչ պատրաստուէին անոր հանդերձները։

"Ես ձեռք մը նոր հանդերձ ունիմ," ըսաւ տղան, "և ահա հոս," յաւելցուց ներս բերելով իւր ծրարը, "կայ ուրիշ ձեռք մը հանդերձ ևս, նաև երկու շապիկ, և երկու անձեռոցիկ։"

Աղնիւ բժիշկը չփոթեցաւ, վասն զի պէտք չունէր ուրիշ անձ յաւելցունել իւր տան վրայ այդ ժամանակ։ Եւ սակայն կը զգար թէ չէր կրնար դէմ կենալ տղին անվհատ հաստատութեան և ծնողաց վստահութեան։ Ընդունեց փոքրիկ տղան որ այսպէս անոր խնամոց կը յանձնէր ինքզինք։ Եւ բժիշկին ձեռայ ներքև դաստիարակուելով այն չնչին նպարավաճառը եղաւ յետ ժամանակաց՝ երկրին ազնուագոյն մարդկանց և հանճարեղ և յաջող բժիշկներէն մին։

### ՈՐՈ՞Ւ ԱԶԲ Է

Պատանեաց խումբի մը զբօսնելոյ հաճելի կերպ է ջանալ ճանչնալ զիրար կամ որոշել իրարմէ միայն աչուըները տեսնելով։

Շաբ մը հաստատէ գնդասեղով դրան ճամբուն վրայ տախտակամածէն իրը հինգ ոտք բարձր։ Բաց մեծ թերթի մը թղթոյ վրայ երկու ծակ որոց մէջէն տեսնուին երկու աչքերը որոշ բայց չերևին բնաւ երեսին ուրիշ մասերը։

Եթէ առաջիկայ գտնուողներուն մէջ կան այնպիսիք որ ունին տաղանդ գծագրութեան, թուղթին վրայ որ պիտի ծառայէ իրրև դիմակ, կրնան նկարել բերան և քիթ, նաև յօնք։

Երբ թուղթը գնդասեղով կը հաստատուի շրէին վրայ, խումբը պէտք է բաժնուի երկու խմբակաց, որոց մին ծնայ սենեկին մէջ իրրև հանդիսատես և դուշակ, և միւսը երթայ շրէին եւ տեսը, իրրև կատարող դերին։ Ընտրոց մին թող կենայ դիմակին, ծակած թուղթին, եւ որ, այնպէս որ անոր աչուըները որոշ տեսնեն սենեկին մէջ գտնուողները, և անոր ընկերներէն մին թող հարցունէ, "Որո՞ւ աչք է։"

Եթէ շիտակ պատասխան արուի, շալին եւ որ գտնուողները կը ծափահարեն։

### ՄԻ՛ ՀԱՑՀՈՑԵՐ

Տր. Աբբոտը, յետ երկար բացակայութեան, իր ի Հնդկաստան ըրած առաքելութենէն դառնալու ատեն, մինչ իր տղուն հետ մեկտեղ շոգենաւին վերնայարկը կայնած էր, լսեց որ մարդ մը ամպարիշտ լեզուով կը խօսեր բարձրաձայն։ "Տե՛ս, բարեկամ," ըսաւ Տոդմորը, հայհոյչին ուղղելով խօսքը, "այս տղան, իմ որդիս, ծնած և մեծցած է հեթանոս երկրի մէջ, բայց իւր բոլոր կենաց մէջ լսած չէ բնաւ ցարդ որ մէկը հայհոյէ իւր Արարչին։ Մարդը կարմրեցաւ, նեղսիրտ խնդրեց իւր անզգուշութեան համար, և շատ ամչցաւ։

Ամերիկայի Միսիոնարաց ընկերութեան կողմէն,
Խմբագիր Ճ. Ֆ. ԿՐԻՆ
Փոխ–խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ
Տիւնտանճըլար Հագուստ. Ամերիկան Խան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ